ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1947, № 1 *Общественные науки*

Դ. Պլատոնով

ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻԱԼԵԿՏԻԿԱՆ

Իդեալիստները գործառնում են վերացական կատեգորիաներով, որոնք դուրս են կանգնած իրական հարաբերություններից. պատմականը հետևցվում է տրտմարանականից և դրա համար էլ նա զուրկ է օբեկտիվ հիմքերից՝ լինելով միանգամայն անգիտ մի բան։ Իդեալիստն իր առաջ խնդիր է դնում ոչ թե ուսումնասիրել իրերի աշխարհը, այլ մտքի աշխարհը, մտածողությունը, որը հանդիսանում է տեսանելի երևույթների դեմիուրգը. մտքի առարկան միտքն է՝ իր որոշ ձևերի և արտահայտությունների մեջ վերցրած. իսկ քանի որ միտքը, մտածողությունը ներքին կապերի մեջ չի գտնվում իրերի և երևույթների հետ, ապա հասկանալի է դառնում, որ մտքի ձևերի հետազոտությունը տարվում է միանգամայն առանձնացած վիճակում «մաքուր» տեսքով։ Իդեալիստական այս նախադրյալից ելնելով՝ Կանտը և ուրիշները լոգիկան սահմանում են որպես գիտություն բանականության մասին, մտածողության ապրիորի անհրաժեշտ օրենքների մասին. լոգիկան չպետք է զբաղվի բանականության օբեկտներով, որոնց բազմազանությունն անվերջ է. նա պետք է զբաղվի միայն բանականությամբ, բացառապես միայն նրա ընդերքից ծագող խնդիրներով։ Լոգիկան գործ ունի մտածողության ֆորմալ կանոնների հետ։ Կանտի տեսակետից լոգիկան իր հաջողությամբ պարտական է՝ հենց այսպիսի խստիվ սահմանափակմանը, մի բան, որ նրան իրավունք և հնարավորություն է ընձեռում վերանալ (отвлечься) դիտելիքների բոլոր օբեկտներից և նրանց տարբերություններից. այդ բանի հետևանքով էլ լոգիկայում բանականությունը գործ ունի ինքն իր հետ և իր մաքուր ձևերի հետ։ Սխալվում են նրանք, ովքեր պրակտիկայի հետ եղած կապի մեջ տեսնում են գիտության առավելությունը. դա ավելի շուտ մինուս է։ Այսպիսի պնդումի ապացույցը Կանտը տեսնում է այն բանում, որ մաթեմատիկան արժանի բարձրության էր հասել կլասիկ շրջանի Հունաստանում այն պատճառով, որ նա հիացել է ինքն իրենով՝ ոտք չդնելով սոցիալական կյանքի բոհի և քոհի մեջ։ Մինչդեռ Եգիպտոսում նա երկար ժամանակ մնացել էր մի կետի վրա կանգնած նրա համար, որ զուտ մտքի այդ «արքայական ուղին» չի շարունակվել և այն կապվել է կյանքի հետ։ Մաթեմատիկան ապրեց «մեծ ռեոլուցիա» այն բանի հետևանքով, որ հանճարեղ մի մարդ նրան գուրս բերեց այդ կեղծ, նրա էությանն անհարիր դրությունից։ Հուսալի գիտելիքն ապրիորի ծագում ունի, այդպիսի դիտելիքը ստեղծվում է այն ժամանակ, երբ իրեն վերագրում ենք այն, ինչ անհրաժեշտորեն հետևում է իրի մեջ մեր կողմից, մեր հասկացողությունների համաձայն ներդրումից։

Այսպես ուրեմն, բանականությունն իր պրինցիպները կյանքից չի ստացել։ Նա դրանք պատրաստի ձևով է ունեցել։ Նա մի ձեռքում ունեցել է պատրաստի պրինցիպները, որոնց պետք է համակերպվեն երևույթները,

որպեսզի նրանք բարձրացվեն օրինքի աստիճանը, իսկ մյուս ձեռքում՝ էքսպերիմենտները, որոնք նույնպես ձևված և մտածված են ըստ պրինցիպների։ Այսպիսի պատրաստի զենքերով սուբեկտը մոտենում է բնությանը՝ լինելով նրա դատավորը՝ հարկադրելով նրան առաջադրված հարցերին պատասխան տալ։ Լոգիկան սոսկ տեխնիկական միջոց է՝ ունենալով դուստ ֆորմալ բնություն։ Կանտի մոտ ձևն ու բովանդակությունը կտրուկ անջատվում են իրարից, ուսումնասիրվում են մտքի ձևերը, առանց որևէ բովանդակության։ Մտքի ձևը լոկ շրջանակ է, ցանկացած դեպքում այն կարելի է վերցնել, դարձել, տեղափոխել ոչ մի ձևով չշոշափելով բովանդակությունը։ Ֆորմալ լոգիկային օտար է պատմականության տեսակետը. նա միտքն ու նրա ձևերը վերցնում է որպես մեկընդմիշտ տրված բան՝ սահմանելով նրանց համար հավիտենական կանոններ՝ անտեսելով այն, որ մտածողության գիտությունը, ինչպես և ամեն մի այլ գիտություն, պատմական գիտություն է, գիտություն մարդկային մտածողության պատմական զարգացման մասին։ Էնգելսը հենց այդ նկատի ունենալով, գանում է, որ մտածողության օրենքների թեորիան բնավ ինչ-որ մեկընդմիշտ հաստատված «հավիտենական ճշմարտություն» չէ։

Ֆորմալ լոգիկան այդպիսի «հավիտենական՝ ճշմարտություն» է համարում մտքի նույնության օրենքը՝ A—A-ին։ Անհնար է, որ միևնույն բանը միևնույն ժամանակ և միևնույն իմաստով հատուկ լինի և չլինի միևնույն առարկային։ Արիստոտելյան այս ֆորմուլան իմաստության գագաթնակետն է համարվել։ Ֆորմալ լոգիկայի մյուս երկու պրինցիպները առաջին պրինցիպի վերծանումն են, մի որոշ իմաստով, կոնկրետացումը։ Երեք պրինցիպներն էլ անտարբեր են դեպի հետազոտվող առարկայի բնությունը, այլ գործ ունեն միայն մտքի ձևերի հետ։ Այդ պատճառով էլ ֆորմալ լոգիկան առատ նյութ է տալիս սխոլաստիկայի և սոփեստության համար. ֆորմալ ձևով մոտենալով երևույթներին՝ ամեն ինչ հնարավոր է ասել, ամեն ինչ հնարավոր է պնդել. բավական է ձևական ճշմարտության մի կտրիկ, որպեսզի բառային մի ամբողջ բարդ կառուցումներ ստեղծվեն. ենթադրենք. թե հարց է արվում. ինչ բան է դրամը. երևույթի արտաքին մի քանի կողմերը վերցնելով՝ կարելի է ասել.—դրամը բոլոր կապերի կապն է, մյուս կողմից՝ իրերի ընդհանուր խառնակումն է, անհնարինությունների սերտ միացումը։ Նա հավատարմությունը վերածում է անհավատարմության, սերը՝ ատելության, ատելությունը՝ սիրո, առաքինությունը՝ մոլության, մոլությունը՝ առաքինության, ծառային՝ տիրոջ, տիրոջը՝ ծառայի, անխելքությունը՝ խելքի, խելքը՝ անխելքության. նա հակասականին ստիպում է համբուրվել։

Նույնության այդ հոչակավոր օրենքը կարող է արդյոք մարդկանց աղատել։ Մարքսի կողմից նշվող այսպիսի ֆորմալ մտահանգումներից։ Ռուս դրող Ն. Գ. Գոմյալովսկին իր «Բուրսակներ»-ում լավ էր նկատել ֆորմալ մտածողության սահմանափակությունն ու նեղությունը։ Նա կծու ծաղրում է ուսուցման այն սխոլաստիցիզմը, որը դեկավարվում էր ֆորմալ լոգիկայով. «Բոլոր մարդիկ մահկանացու են, Կայենը մարդ է, ուրեմն նա ևս մահկանացու է». «Հոգին միանում է մարմնին նախապես հաստատված օրենքի համաձայն». «Սատանան կարող է մեղանչել». «Հանդերձյալ կյանքում հոգու էությունը ենթարկվում է մահվան վիճակին» և այլն։

Այսպիսի հարցերը պատշաճում են ֆորմալ լոգիկային, քանի որ նա հարցը առարկայական բովանդակությամբ չի քննում, այլ մտքի ֆորմալ կանոնների համաձայն։

Նույնության պրինցիպը անհնարին է դարձնում ամեն մի տարբերություն, ամեն մի հավասարություն, պայքար շարժում և հետևաբար անցումը՝ մեկից մյուսին. դա բացարձակ անշարժության, քարացածության, նիրվանայի սկզբունքն է։ Այս տեսակետը,—ինչպես նկատում է Լենինը,—մոտ է ֆիլիսաների սրտին, որովհետև նույնության պրինցիպով վերանում է ամեն մի հակասություն՝ ամեն ինչ դառնալով հարթ, մեռյացված, սանրված։

Հեգելը համաձայն չէ այն ընդհանուր կարծիքին, երբ լոգիկան սահմանվում է որպես միայն իմացության ձև, գիտություն մտածողության մասին, մտածողության ձևերը իբրև թե ռանկիրառելի են ինքնին իրի նկատմամբ։ Հեգելը գտնում է, որ անհեթեթ է այն ճշմարիտ իմացությունը, որը չի ճանաչում ինքնին իրը։

Հեգելը այսպես է բնորոշում լոգիկայի առարկան՝ դա մտածողության զարգացումն է իր անհրաժեշտության մեջ։ Սահմանումը լավ է, սակայն Հեգելի իդեալիզմը թույլ չի տալիս նրան մերձենալ իրերի աշխարհին, նրա օրինաչափություններին. զարգացող մտածողությունը նորից դուրս է մնում իրերի աշխարհից, իրական զարգացումից։ Նրա պահանջը՝ թեորիական, վերացական տեսակետից ճիշտ էր, քանի որ նա գտնում էր, թե տրամաբանական ձևերն ու օրենքները ոչ թե դատարկ կեղև են, այլ օբյեկտիվ աշխարհի արտացոլումը. սակայն հայտնի է, որ այդ «օբյեկտիվ աշխարհը» Հեգելի սիստեմում մի այլ ավելի «հզոր» բանի՝ աբսոլուտ իդեայի այլակեցությունն է։

Լեվի Բրյուլը նույնպես առարկում է հասկացողությունների ապրիորիզմի դեմ, գտնելով, որ մարդկային ոգու նույնության ֆորմուլան խանգարում է հասկանալ մարդկության նախնական աստիճանը։ Այդ գիտնականը նկատել է, որ մարդկային մտքի մեխանիզմը այնքան բարդ է, այնքան ճկուն է ու նուրբ, որ ոչ մի դեպքում չի կարելի կաշկանդվել ֆորմալիզմի կապանքներով։ Մարդկությունը ծագել և զարգացել է. միտքը նույնպես ծագել և զարգացել է, մինչդեռ ֆորմալ լոգիկայի հիմնական օրենքը ելնում է բացարձակ նույնական վիճակից, մի վիճակ, որը զուրկ է ներքին ամեն մի տարբերությունից, իսկ դա նշանակում է, որ նա զուրկ է ամեն մի շարժումից ու փոփոխությունից, այդպիսով, բացարձակ ինքնահավասար դրությունը փակում է և չի կարող չփակել ամեն մի ելքի ճանապարհը, իսկ մուտքն էլ գրսից է կատարվում, արհեստականորեն, գերբնական ոգի օգնությամբ։

Հեգելը իրավացի է, երբ ներքին, դիալեկտիկական հակասությունը համարում է ամեն մի կենսունակության և շարժման արժատը։ Երբ հասկացողության տրամաբանական ձևերը—նկատում է Հեգելը—իրոք հանդիսանային մտապատկերների կամ մտքերի մեռյալ, անգործուն, անտարբեր զեռեղարանները, ապա նրանց դիտենալը կլիներ ճշմարտության համար միանգամայն անպետք նկարագրություն, առանց որի կարելի էր լիովին լավ գնալ։ Սակայն իրականում հասկացողության ձևերը, ընդհակառակը, հենց իրականության կենդանի ոգին են։

Մտածողության կատեգորիաները տեխնիկական այնպիսի պարզ մի-

ջոցներ չեն, որոնց օգնությամբ կարգավորվում են երևույթների խմբերը, այլ օրինաչափությունների (բնության և հասարակական կյանքի) արտացոլումներ են։ Երբ ասում ենք գոյ, որակ, պատճառ, սուբստանց, էություն և այլն, այդ կատեգորիաների մեջ արտացոլում ենք օբեկտիվ աշխարհի էական հարաբերությունները։ Կատեգորիաների մշակումն ու ստեղծումը վկայում է այն բանի մասին, որ միտքը խորացել է իրերի էության մեջ՝ արտահայտելով նրանց մեջ եղած էականը, տիպիկը։

Տրամաբանական կատեգորիաների և մտածողության ձևերի զարգացումը սերտորեն հյուսված է գիտության և փիլիսոփայության պատմության հետ. տրամաբանականն ու պատմականը համընկնում են, սակայն, վերջինի հիմքի վրա։ Էնգելսը որոշակի է այդ բանը պնդում. նա գտնում է, որ մտածողության ձևերի և կատեգորիաների զարգացումը համընկնում է էմպիրիկ հիմքի վրա հենվող մեր թեորետիկական գիտելիքների զարգացման հետ, որից էլ հետևում է այն, որ մտածողության օրենքները և բնության օրենքները անհրաժեշտաբար համաձայնվում են իրար հետ, երբ միայն դրանք ճիշտ են ճանաչվել։ Իմացությունը հարստանում է, բազմակողմանի է դառնում իր առաջընթացի մեջ, իր շարժման և զարգացման մեջ, այդ այդպես է, քանի որ մտքի բովանդակությունը՝ դա առարկայական աշխարհն է. «Լոգիկայի օրենքները օբեկտիվի արտացոլումն են սուբեկտիվ դիտակցության մեջ»[1]

Լենինը գտնում է, որ լոգիկան գիտություն է ոչ թե մտածողության արտաքին ձևերի մասին, այլ բոլոր «մատերիական, բնական և հոգևոր իրերի» զարգացման օրենքների, այսինքն՝ աշխարհի ամբողջ կոնկրետ բովանդակության և նրա իմացության զարգացման օրենքների մասին, այսինքն լոգիկան աշխարհի իմացության պատմության հանրագումարն է, գումարը. եզրակացությունը։

Գանը իրավացի է, երբ նկատում է, որ լոգիկան անմիջականորեն իրերով չի զբաղվում, սակայն նա խորապես սխալվում է, երբ կարծում է, թե լոգիկան առարկայական ոչ մի բովանդակություն չունի։ Մինչդեռ իսկական, ճշմարիտ լոգիկան գործ ունի բովանդակալից ձևերի հետ, ձևեր, որոնք արտացոլում են՝ օբեկտիվ ռեալ աշխարհի շարժման օրենքները. այդ նկատի ունենալով է, որ Լենինն ասում է, թե լոգիկայի առարկան ոչ թե իրերն են, այլ նրանց շարժման օրենքները։

Մտածողությունը՝ հասկացողությունը, դատողությունը, մտահանդումը, մի խոսքով՝ կատեգորիաները և մտքի ձևերը գտնվում են մշտական շարժման և զարգացման մեջ. այդ այդպես է, քանի որ օբեկտիվ կյանքը հարատև առաջխաղացման մեջն է, իսկ գլխի դիալեկտիկան,—Էնգելսի դիպուկ արտահայտությամբ,- արտացոլումն է ռեալ աշխարհի՝ ինչպես բնության, նույնպես և պատմության շարժման ձևերի։ Դիալեկտիկը իրականությունը որպես մտքի աղբյուր՝ ետ է շարժում, վարագուրում է այն նրանով, որ մտքի մի աստիճան առանց հետացորդի դուրս է բերում նախորդ աստիճանից, իսկ երբ օղակները վերջանում են, նա դիմում է աստվածային «ողորմածությանը»։ Հեգելի նման խելոք մտածողը վերջիվերջո, լոգիկայի մեջ տեսավ աստծո պատկերումը, ինչպես որ նա կա իր հավիտենական էու-

[1] Լենինյան ժողով., հ. IX, էջ 208։

թյամբ, բնության և որևէ վերջական (конечное) ոգու ստեղծումից առաջ։

Հասկացողությունները պատմական զարգացման արդյունք են, և ոչ թե ապրիորի բաներ. մարդու պատմության նախնական աստիճաններում հոգեվոր կողմի իրային, առարկայական բովանդակությունը ավելի քան ակնառու էր, հասարակական մարդը դանդաղ, հետզհետե խարսխվելով է կարողացել ազատվել իրերի մշտական ճնշումից, հասնելով որոշ ընդհանրացումների, արստրակտ մտածողությանը։ Մինչև որ գոյանար «ջերմության» հասկացողությունը, ինչքան դարեր մարդիկ իրականության մեջ պետք է ղղային և շոշափեին ջերմություն արձակող իրերը։ Էնգելսը շատ ցայտուն ձևով է արտահայտել ու ձևակերպել մարդկային մտքի առաջխաղացման կապը էմպիրիայի, պրակտիկայի հետ։ Իրրև այդ բանի օրինակ նա վերցնում է ջերմության գաղափարը ցույց տալով նրա շարժման ու զարգացման աստիճանները։ Հայտնի է, որ գիտության մեջ նոր շրջան բաց արեց այն հայտնագործությունը, որ ջերմությունն իրենից ներկայացնում է մոլեկուլյար շարժում։ Սակայն այդ ինչպես ստացվեց, ձեռք բերվեց. այդ կատարվեց հանպատրաստից, մեկից, հանկարծաստեղծության խաղով, ինտուիցիայի անորսալի լույսով, թե մի այլ բանով։ Էնգելսը վկայակոչում է մտքի պատմությունը։ Արդեն մինչ-պատմական շրջանի մարդիկ գործնականորեն գիտեին, որ շփումը առաջացնում է ջերմություն, երբ նրանք, մի գուցե հարյուր հազար տարի առաջ, գտան շփման միջոցով կրակն ստանալու եղանակը, իսկ գրանցից էլ շատ ավելի առաջ մարդիկ գիտեին տաքացնել իրենց ժարմի սառած մասերը՝ նրանց պարդելով կրակին։ Սակայն այստեղից մինչև այն բանի հայտնագործումը, թե շփումը ընդհանրապես ջերմության աղբյուրն է, անցել են, ով գիտե, հազարամյակներ. սակայն, այնուամենայնիվ, եկավ այն ժամանակը, երբ մարդկային ուղեղն այնքան զարգացավ, որ կարողացավ դատողություն անել, թե շփումը ջերմության աղբյուրն է։ Անցան նոր հազարամյակներ, մինչև որ առաջադրվեց այսպիսի ֆորմուլը. ամեն մի մեխանիկական շարժում շփման միջոցով ընդունակ է փոխարկվել ջերմության։ Իսկ այդ Մայերի մոտ ավելի կատարյալ ձև ընդունեց. շարժման ամեն մի ձև որոշ պայմանների դեպքում ընդունակ է ուղիղ թե շեղակի ձևով փոխարկվել շարժման այլ ձևի։

Էնգելսի այս հետաքրքրական մտքերից ակնհայտ է դառնում, որ մտքի աշխատանքը աճում և բարձրանում է որոշ պայմաններից, հասարակական կյանքի նյութական-արտադրական պայմաններից։ Այստեղից էլ ուղղակի հետևում է այն հիմնական թեզը, թե տրամաբանականը մի այնպիսի արստրակտ բան չէ, որ չունենա շփման կետ իրականության հետ, ընդհակառակը, տրամաբանական պրոցեսը պատմական պրոցեսի ընդհանրացած արտահայտությունն է։ Հասկացողությունների դոյացումները հանկարծաստեղծության արդյունք չեն, ոչ էլ սուբեկտիվ հորինվածություններ։ Մեր հասկացողությունները գոյություն ունեցող իրերի «մտածական օբրազներն» են. հասկացողությունը «մարդու իմացության մեջ բնության արտացոլման ձևն է» (Լենին)։ Գիտական մտքի ընթացքի կանոնավորությունը, հետևականությունը, ամբողջությունն իրենց հիմքերն

ունեն օբեկտիվ իրականության ընթացքի մեջ։ Հասկացողությունը ճանաչողական միջոց է և այն էլ ավելի կատարյալ. նա արտացոլում է իրականության մեջ գոյություն ունեցող կապերն ու հարաբերությունները։ Ֆորմալ լոգիկայի տեսակետից հասկացողություններն ինչքան ավելի ընդարձակ լինեն, այնքան ավելի աղքատ են բովանդակությամբ, այսինքն հասկացողության ծավալը և բովանդակությունը հակադարձ համեմատական են, որքան լայն է ծավալը, այնքան նեղ և աղքատ է բովանդակությունը։ Այդ այդպես է, քանի որ ըստ ֆորմալ լոգիկայի ընդհանուր հասկացողությունները անբովանդակ աբստրակցիաներ են՝ չպարունակելով իրենց մեջ կոնկրետի և առանձնահատուկի հարստությունը։ Ընդհանուր հասկացողությունները լիակատար ֆիլտրացիաներ են, «թորած» ջուր չունենալով իրայթն ոչ մի խառնուրդ։ Ֆորմալ տրամաբանության մեջ հայտնի է «Պորֆիրի ծառը». այդ սխեմայի համաձայն՝ ամենալայն հասկացողությունը բովանդակության տեսակետից ամենաաղքատն է (կեցություն, մարմին, օրգանիզմ, կենդանի, մարդ)։ Առաջին հասկացողությունն ամենալայնն է, բայց բովանդակության տեսակետից ամենաաղքատն է։ Այդ այդպես է, քանի որ ըստ նրանց՝ հասկացողությունների գոյացման պրոցեսը բացարձակ եռամտն պրոցես է։ Մինչդեռ իրականության մեջ պատկերը բոլորովին այլ է. «մատերիա», «կեցություն» հասկացողությունները սահմանակետային են, սակայն բովանդակությամբ շատ ավելի խոր, քան այլ հասկացողությունները։

Որպեսզի մարդը հասնի հասկացողությունների այդ աստիճանին, նա պետք է ձեռք բերեր մի շարք այլ, թեև ավելի որոշակի, սակայն համեմատաբար նեղ, հայտնի իմաստով միակողմանի հասկացողությունների «ավելի որոշակին=ավելի միակողմանիությունը» (Լենին)։ Բույս, կենդանի, օրգանիզմ և այլ հասկացողությունները նախադրյալ են մատերիա հասկացողությունը, մի բան, որն ավելի լայն ընդգրկումով է արտահայտում օբեկտիվ ռեալականությունը. այն, ինչ ընդհանուր ճ մնացած հասկացողությունների համար՝ բաց անելով կապերի ընդարձակ աշխարհ՝ արտացոլում է երևութական աշխարհի ամենաէական, ամենատիպիկ կողմերը։ Ֆորմալ լոգիսաներն ընդհանուր հասկացողությունները կտրուկ և անդառնալիորեն հակադրում են զգայական տվյալներին, իբրև կենդանի պատկերացումներին՝ համարելով դրանք այնպիսի անտիպողներ, որ նրանք երբեք իրար չպետք է փնտռեն և գտնեն։ Մինչդեռ գիտականորեն հաստատված է, որ ամեն մի լուրջ աբստրակցիա մեկնում է կոնկրետի հողից և ավելի հարըստացած ձևով նորից նրան է վերադառնում։ Աբստրակցիայի նշանակությունն այն է, որ հետազոտողին ազատում է երևույթի էությունը մթագնող, բարդացնող մանրամասնություններից, պատահական մոմենտներից՝ ցույց տալով դեպի «փոքքերը» տանող ճանապարհը։ Ամեն մի հասկացողություն, իհարկե, ընդհանուր է, սակայն նա իր մեջ առնում է կոնկրետի հարստությունը. ընդհանուրն ու առանձնահատուկը իրար չեն բախվում, մեկը մյուսին չի բացառում՝ գտնվելով դիալեկտիկական միասնության մեջ։ Այս բանը շատ լավ են ըմբռնել մեծագույն արվեստագետները։ Դյոթեն գըտնում է, որ «բանաստեղծը պետք է կալողանա որսալ առանձնահատուկը, և, որքանով պարունակում է իր մեջ ինչ-որ սառող բան, մարմնացնի նրանում ընդհանուրը»։

Ոչ միայն գիտության, այլև արվեստի բնագավառում առանց լուրջ աբստրակցիաների հնարավոր չէ առաջ շարժվել. առանց տիպերի «ստեղծման գրականությունը կդադարեր գրականություն լինելուց. իսկ այդ բանը գլուխ է գալիս աբստրակցիայի եղանակով. «աբստրահվում»-ցոկվում են շատ հերոսների բնորոշ քաջագործությունները, ապա այնուհետև այդ գծերը «կոնկրետանում են»—ընդհանրացվում մի հերոսի, ասենք, Հերքուլեսի կամ էլ Ռյազանի գեղջուկ Իլյա Մուրոմցու տեսքով. ամեն մի առևտրականի, աղնվականի, գեղջուկի մեջ ցոկվում են ամենաբնական գծերը և ընդհանրացվում են մի առևտրականի, աղնվականի, գյուղացու տեսքով։ Այդպիսով ստանում ենք «գրական» տիպը։ Այդպիսի օրինակով են ստեղծված Ֆաուստի, Համլետի, Դոն-Քիշոտի տիպերը, Լև Տոլստոյը նույնպես այսպիսի ձևով է գրել խոնարհահեղ, «կամոք աստծու սպանված» Պլատոն Կարատաևին, Դոստոևսկին՝ ղանազան Կարամազովներ և Սվիդրիգայլովներ, Գոնչարովը Օբլոմովին և այլն։ Այնպիսի մարդիկ. ինչպիսին Թվարկածներն են, կյանքում չեն եղել. եղել են և կան նրանց նմաններ, որոնք ավելի ժանր են, ավելի քիչ ամբողջացած, և ահա նրանցից, մանրերից, ինչպես աշտարակը կամ գմբեթը աղյուսներից՝ խոսքի վարպետները «մտահնարում են» մարդկանց ընդհանրացած «տիպերը»—անվանակոչական տիպերը։ Ամեն մի ստախոսի մենք անվանում ենք Խլեստակով, ստորաքարշի՝ Մոլչալին, կեղծավորի՝ Տարտյուֆ. խանդոտի՝ Օթելլո և այլն[1]։

Հասկանալի է, որ եթե չլինեն «աղյուսները», չի լինի և շենքը, սակայն հայտնի է, որ անթիվ ու անհամար «աղյուսներից» աշխարհում մարդն իրեն անզոր և անօգնական կզգար, եթե ձեռք չբերեր ընդհանրացման, աբստրակցիայի կարողությունը, որը Արիադնայի թել է նրան տալիս։ Ընդհանուրը, տիպիկը. առանձիններից. եղակիներից դուրս ֆիկցիա է, չգու եթե չլինեին «ժանր», «ամենօրյա հերոսներ», այսինքն սովորական մարդիկ, ապա չէին կարող լինել նաև իսկական հերոսները, նրանք, որոնց առաջ Թոմաս Կառլեյլը խունկ է ծխում՝ նկատելով, որ եթե մարդու հոգում մի նվիրական և սուրբ բան կա, դա զմայլանքն ու երկյուղածությունն է հերոսների առաջ։ Այդ տիպերը ընդհանրացման արդյունք են. ընդհանուրն ու առանձինը դիալեկտիկական միասնության մեջ են։ Լենինը երևելի ձևով նկատել և արտահայտել է այս դիալեկտիկան. ընդհանուրը գոյություն ունի սոսկ առանձինի մեջ, առանձինի միջոցով. Ցուրաքանչյուր առանձին հանդիսանում է (այսպես թե այնպես) ընդհանուր։ Ցուրաքանչյուր ընդհանուր հանդիսանում է առանձինի մասնիկը (կողմը կամ էությունը)։ Ցուրաքանչյուր ընդհանուր սոսկ մոտավորապես է ընդգրկում բոլոր առանձին առարկաները։ Ցուրաքանչյուր առանձին ոչ լրիվ է մտնում ընդհանուրի մեջ և այլն և այլն։ Ցուրաքանչյուր առանձին հաղարավոր անցումներով կապված է ուրիշ տեսակ՝ առանձինների հետ (իրերի, երևույթների, պրոցեսների) և այլն։ Այստեղից հետևում է, թե աբստրակցիան ինչպիսի բնույթի պետք է լինի. նա մտքի դատարկության ցուցադրումը չէ, այլ եղանակ՝ լուրջ արդյունքների հասնելու համար. աբստրակցիայի օգնությամբ մտածողությունը բաց է անում իրերի էական հարաբերությունները, մի բան, որ անմիջականորեն չի տրվում, ինչքան էլ ինտուիտիստները «շլացուցիչ» օրինակներ

[1] Մ. Գորկի. Գրականության մասին, էջ 173.

բերեն ճանաչողության ակնթարթայնության մասին։ Իսկական ընդհանրությունը—Լենինի դիպուկ բնորոշմամբ—մարմնացնում է հատուկի, առանձնակի և անհատականի հարստությունը։ Վերցնենք որպես օրինակ պրոլետարիատի դիկտատուրա հասկացողությունը։ դա ընդարձակ և միևնույն ժամանակ խոր ու բովանդակալից հասկացողություն է։ նա իր մեջ առնում է ոչ միայն ընդհանրապես «դաշինքի» գաղափարը, այլև այն վերցրած իր ավելի կոնկրետ ձևի մեջ—«հատուկ ձևի դաշինք», այսինքն դաշինք ոչ միայն ընդհանրապես, այլ միայն «աշխատավորների ոչպրոլետարական բազմաթիվ խմբերի հետ», դա դասակարգային դաշինքի հատուկ ձև է, որը հետապնդում է որոշ նպատակ՝ կապիտալի տապալումը, սոցիալիզմի լիակատար ստեղծումն ու ավարտումը։ Տրոցկին դիկտատուրայի հասկացողությունից լիովին վտարում էր «դաշինքի գաղափարը»՝ դարձնելով այն մերկ, բովանդակազուրկ ֆորմուլա։ Իսկ Բուխարինը շեշտը դնում էր ընդհանրապես դաշինքի վրա՝ չընդունելով այն, որ դա դաշինքի հատուկ ձև է, որը հետապնդում է որոշակի նպատակ, կապիտալի տապալումը, սոցիալիստական կարգերի լիակատար ստեղծումը։ Երկու դեպքում էլ հասկացողությունը դատարկվում է, սակայն տարբեր ձևով. Տրոցկին այն աստիճանի է նեղացնում պրոլետարական դիկտատուրա հասկացողությունը, որ նա ոչինչ չի կարող ընդգրկել, նա չի կարող արտացոլել, արտահայտել իրականության էական հարաբերությունները, մինչդեռ Բուխարինը արտաքուստ ընդլայնում է դիկտատուրա հասկացողությունը, սակայն այն ձևով, որ նա չմարմնացնի,հատուկի, առանձնակի, անհատականի հարստությունը, որ նա չլինի «հատուկ ձևի դաշինք»։ Այս երկու օդլոզ տիպերի նպատակը մեկ է. դիկտատուրան չկարողանա հասնել իր նպատակին—տապալել կապիտալը և ստեղծել լիակատար սոցիալիզմ։

Այս օրինակից որոշակի երևում է, որ լայն հասկացողությունները, երբ նրանք իրոք արտացոլում են իրական, էական հարաբերությունները—հարուստ են և կոնկրետ։ Այսպիսով, մենք տեսնում ենք, որ հասկացողությունները օբեկտիվ աշխարհի էական հարաբերությունների արտացոլումն են։ Չերնիշևսկին իրավացիորեն պնդում էր, որ մարդն իրենից չէ, որ զարգացնում է հասկացողությունները, այլ ստանում է արտաքին աշխարհից... այն ամենը, ինչ արտադրում է մարդկային բանականությունը—այդ տրված է փորձով։

Ֆորմալիստն ընդունում է միայն «սուբեկտիվ տրամաբանությունը՝ ժխտելով իրերի «տրամաբանությունը», այն համարելով ապօրինի բան։ Մտածող սուբեկտը սարդի նման միայն իրենից է թելեր արձակում՝ արտաքին աշխարհից ոչինչ չընդունելով։ Մինչդեռ հայտնի է, որ սոցիալական կյանքի բոլոր մեծ տեղաշարժերի ժամանակ հատկապես շատ լավ երևում է «օբեկտիվ տրամաբանության ուժը, և այն գործիչները, որոնք տապալելով սուբեկտիվիզմով՝ անտեսել են, կամ՝ թերագնահատել են «իրերի տրամաբանությունը», այսինքն սոցիալական կյանքի օբեկտիվ ընթացքը, չարաչար տուժել են, ընկնելով ձախողակ մարդկանց անհրապույր վիճակի մեջ։ Ընկեր Ստալինն իր «Հոկտեմբերյան ռևոլուցիան և ռուս կոմունիստների տակտիկան» աշխատության մեջ խոսելով պրոլետարական ռևոլուցիայի համեմատական հեշտության մասին, նկատում է, որ իրերի ընթացքն իսկ տրամաբանությունը մասսաներին մոտեցրել է ռևոլուցիային։ Մարքսիզ-

մի կլասիկները մարդկային հասկացողություններում տեսնում են իրական իրերի նկարները, հենց դրանով էլ—Էնգելսի բնորոշմամբ—հասկացողությունների դիալեկտիկան դառնում է իրական աշխարհի դիալեկտիկ շարժման գիտական արտացոլումը։ Մարքսը լավ է ցույց տվել, որ ընդհանուրի և մասնավորի տրամաբանական հասկացողությունների ծագումը սերտորեն կապված է իրական հարաբերությունների հետ. Մարքսը Էնգելսին գրած (1868 թ.) նամակներից մեկում մատնանշում է այն փաստը, որ ընդհանուրի և մասնավորի լոգիկական հասկացողությունները ծագում են հողային ընդհանուր և մասնավոր տիրապետության սահմաններից. «Ի՞նչ կասեր ծերուկ Հեգելը, եթե այն տշխարհում իմանար, որ «ընդհանուրը» (Allgemeine) գերմանացիների և հյուսիսայինների մոտ այլ նշանակություն չունի, քան համայնական հողը (Gemeinland), իսկ «մասնավորը» (Sundre, Besondere) ոչ այլ ինչ է, քան մասնավոր սեփականության (Sondereigen) անջատումը այդ համայնական հողից։ Այստեղ լոգիկական կատեգորիաները—նղովյալները—ուղղակիորեն ըղխում են «մեր հարաբերություններից»[1]։

Իդեալիստները կատեգորիաները կտրելով «իրական հարաբերություններից», բնական է, որ չէին կարող ցույց տալ նրանց անցումները մեկը մյուսին։ Իդեալիստը հասկացողությունների բարձունքներից դիտում է կյանքի «ժխորային հարաբերությունները», աշխատելով այնտեղ դրսից կարդավորություն մտցնել. նրանք չեն կամենում էմպիրիայից բարձրանալ դեպի ընդհանուրը. ցանկանում են լողալ սովորել, չկամենալով ջուրը մտնել։ Այս նկատի ունենալով՝ Լենինը նշում է այն, որ Կանտի մոտ իմացությունը բաժանում, անջրպետում է մարդուն բնությունից, մինչդեռ իրականում իմացությունը նրանց միացնում է։ Ստեղծագործ մարդը հոյակապորեն բարձրացնում, գեղեցկացնում է բնությունը, թափանցում է նրա խորխոր գաղտնիքները, տիրապետում է նրա օրենքներին, այն դարձնելով լծակ ոչ թե բնությունը ամայացնելու նպատակով, այլ այն քարեշեն դարձնելու համար։ Պատմական կապերի գիտական իմացությունը թույլ է տալիս ավելի ընդարձակ և խելացի ձևով ներգործել բնության երևույթների վրա։ Այս տեսակետից լավ իլյուստրացիա են սովետական գիտնականների մեծ ջանքերը բնությունը վերափոխելու գծով։ Միչուրինը մեծ ճանապարհի սկիզբը դրեց, մի ճանապարհ, որով ընթանալով, հայտնի իմաստով, ստեղծվում է նոր բնությունը։ Մենակ այդ գիտնականի կյանքը բավական եղավ, որպեսզի ստացվեն բույսերի և պտուղների բազմաթիվ սորտեր (մոտ 126)։

Մարդը «խորհրդակցում» է բնության հետ, սակայն գանձան չէ «բարձր ազնվականության այն խորհրդակցությանը», որի մասին Տոլստոյը չքնաղ հումորով նկատում է. մեկն ասում է «համաձայն եմ», մյուսը բաղմազանության համար ասում է. «և ես էլ նույն կարծիքին եմ». բնությունը «նույն կարծիքին» չէ. նա դիմադրություն է ցույց տալիս, նա գիտե նաև պատժել մարդկանց իր «բնական կարգը» հեղաբեկելու համար, սակայն այնուամենայնիվ մարդը նրան նվաճում է, «կուլտուրականացնելով» նրան, որով և նա ավելի մարդամոտ է դառնում։ Մարդու ազատության երաշխիքը, այսպիսով, բնության օրենքների իմացության մեջ է, մի բան, որը վերջ է դնում մարդու սարկական կախմանը բնությունից. նրանց կապերն

[1] Մարքս և Էնգելս, Երկերի ժող. հ. XXIV, էջ 84-33։

ու հարաբերությունները դառնում են է՛լ ավելի «նորմալ», «արժանավայել». մարդկային։ Կենդանական աշխարհից անջատվող մարդիկ — նկատել է Էնգելսը — նույնպես ազատ չէին, ինչպես և իրենք կենդանիները, սակայն կուլտուրայի ասպարեզում ունեցած յուրաքանչյուր հաջողությունը դեպի ազատություն տանող մի քայլ էր հանդիսանում։

Մարդկային հասկացողությունները բնության համար միանգամայն օտար կամ օտարածին բաներ չեն. եթե միտքը դրսից փաթաթվեր բնության վզին՝ ունենալով բնությունը բացասող, նրան քամահրող ինչ-որ գերբնական բովանդակություն, ապա պետք է կարծել, որ իրամերժ այդ հարաբերություններից ոչինչ չէր ստացվի։ Չէ որ հասկացողությունը «ուղեղի բարձրագույն պրոդուկտն է» (Լենին), իսկ սա իր հերթին մատերիայի «բարձրագույն պրոդուկտն է» — նշանակում է ծագումնաբանական միասնություն առկա է։

Ինչպես ամեն մի բան, այնպես էլ հասկացողությունները ունեն իրենց շարժումն ու զարգացումը. թերի, միակողմանի, աղքատիկ հասկացողությունները գնալով դառնում են ավելի լրիվ, ընդարձակ ե ընդգրկող։ Պատճառականության հասկացողությունը թվում է ապրիորի բան, սակայն փաստ է, որ նա երկարատև զարգացման արդյունք է, երբեք չհասնելով լիակատար ամբարտության։ Դեռևս կան մինչև իսկ ժողովուրդներ, որոնց օտար է, կամ թե հավարյա օտար է պատճառի հասկացողությունը։ «Բոլոր ունեն ամբողջ ժողովուրդներ, որոնք դեռևս այդ հասկացողությունը (պատճառի) ամենևին չունեն, այդ բանի համար պահանջվում է զարգացման բարձր աստիճան»։[1]

Բոլոր հասկացողություններն էլ պատմական հող ունեն, ծագել են որոշ ժամանակ, որոշ պարագաներում. «հավասարության» հասկացողությունը նույնպես թվում է՝ ապրիորի բան է, մեր բանականության ներքին անկապտելի հատկությունը, սակայն լիովին ապացուցված է, որ դա պատմական երևույթ է, հանդիսանալով որոշ հարաբերությունների արտացոլումը. հավասարության պրոլետարական հասկացողությունը հիմնովին տարբերվում է հավասարության բուրժուական հասկացողությունից։ Հենց իրենց պրոլետարների մոտ էլ այդ հասկացողությունը իր նախնական ստադիաներում շատ աղոտ, անորոշ տեսքով էր գծագրվում՝ նրան միացվում էր անրջային շատ բան։ Հավասարության պրոլետարական պահանջը ձևակերպեց և գիտականորեն արտահայտեց մարքսիզմը, այն դնելով դասակարգային պայքարի ուռալ հողի վրա։

Հասկացողությունների գրադացիաները, ամբողջ «մեխանիզմը» լիովին համապատասխանում է իրականությանը (խոսքը վերաբերում է գիտական, լուրջ հասկացողություններին)։ Հասկացողությունները որոշ սուբորդինացիայի մեջ են գտնվում իրար նկատմամբ. եթե վերցնենք այնպիսի հասկացողությունները, ինչպիսին են անընդհատը, ընդհատը, շարժումը, ապա կտեսնենք, որ նրանք տարբեր խորությամբ և ընդգրկումով արտահայտում են իրերի և երևույթների իրական պրոցեսները։ Շարժումը ավելի լայն հասկացողություն է. նա — Լենինի բնորոշմամբ — ժամանակի և տարածության էությունն է. ով ընդունում է ժամանակի և տարածության սու-

[1] Լենինյան ժող. XII, էջ 178։

բեկտիվությունը, նա չի կարող չընդունել նաև շարժման սուբեկտիվությունը.—ամեն ինչ շարժվում է, բայց միայն մտքերի մեջ: Մինչդեռ ժամանակի և տարածության հարությունը արտահայտվում է երկու՝ անընդհատության և ընդհատության հասկացողությամբ։

Հասկացողությունների մեջ իրական կյանքը լայն ընդդրկումներով է տրվում. զգայությունները չեն կարող այդպիսի դեր կատարել. թեորետիկական իմացությունը առարկան բռնում է շատ կողմերից, նրա ընդարձակ հարաբերությունների մեջ. «Թեորիական իմացությունը պետք է օբեկտը տա իր անհրաժեշտության, ամենակողմանի հարաբերությունների, հակասական շարժման՝ իր—մեջ և իր—համար»։[1]

Այսպես, օրինակ, զգայությունները մեզ տալիս են ջերմության զգացողությունը, սակայն թեորիական միտք է հարկավոր, որպեսզի ջերմությունն ըմբռնվի որպես շարժման մի ձև. հասնել այդպիսի հասկացողությանը, նշանակում է իմացության մեջ առաջադիմական լուրջ քայլ կատարել։ Էմպիրիկները՝այդ բանն են վատ հասկանում, Լոկկը գանում էր, որ համընդհանուրը չի պատկանում իրերին, որոնք ըստ իրենց կեցության եղակի են։ Ընդհանուր իդեան — բանականության արտահայտող գործունեության արգասիք է։ Իդեաներն ընդհանուր են դառնում նրա համար, որ նրանցից հեռացվում են տեղի և ժամանակի հանգամանքները։ Ընդհանրության այսպիսի մեկնաբանությունը իմաստ ունի այն չափով, որչափով դա ուղղված է միջնադարյան «ռեալիզմի» դեմ, որը ընդհանուրին երաշխավորում էր միանգամայն ինքնուրույն առանձին գոյություն։ Սենսուալիզմը չի ըմբռնում մտքի, մտածողության ընդհանրացնող նշանակությունը, այդ ընդհանրացման իրական պրոցեսը. սենսուալիստը կարծում է, որ դատողությունը, խորհրդածությունը, կրքերը, մի խոսքով հոգեկան բոլոր օպերացիաները ոչ այլ ինչ են, քան զգայությունն իր տարբեր փոխակերպությունների մեջ վերցրած։

Այսպիսի տեսակետը համարվում է աքսիոմատիկ ճշմարտություն։ Իրոք, ամենամեծ մտածողների համար էլ դժվար և կնճռոտ պրոբլեմներից է եղել ընդհանուրի և առանձինի հարաբերությունը և դրա հետ կապված հասկացողությունների ու զգայությունների ֆունկցիաների հարցը. մեկի ընդունումը մեկնաբանվել է որպես մյուսի մերժում։ Սենսուալիստը զգայությունների դերի և նշանակության պաշտպանն է ընդդեմ ռացիոնալիզմի, որն ամեն կերպ ընդգծում է վերացական մտածողության դոմինանտ դերը։ Այսպես, օրինակ՝ Կոնդիլյակը ընդհանուր պրինցիպների ջատագովողների դեմ առաջադրում է մի պիկանտ հարցադրում. ինչն ավելի անհեթեթ կլիներ մարդկանց այն տեսարանից, որոնք խոր քնից զարթնելով իրենց տեսնեին լաբիրինթոսի մեջ և նրանից ելք գտնելու համար սկսեին հաստատել ընդհանուր պրինցիպներ։

Էմպիրիկը չի կարողանում հասկանալ այն, որ գիտականորեն մշակված ընդհանուրը ներառնում է իր մեջ մասնավորի ամբողջ հարստությունը։ Չգործառնելով ընդհանուր հասկացողություններով, միտքը փոշիանում է իրերի համասփյուռ աշխարհում՝ երևան չհանելով օրենք, օրինաչափություն. «հասկացողությունների (աբստրակտ) գոյացումը ս գործառ-

[1] Լենինյան ժողով. IX, էջ 237։

նությունը նրանց հետ արդեն ներառնում է իր մեջ աշխարհի օբեկտիվ կապի օրինաչափության պատկերացումը, համոզմունքը և գիտակցումը։[1]

Էմպիրիկները զգայությունների առավելությունը տեսնում են այն բանում, որ նրանք վրիպումներ չեն տալիս, քանի որ նրանք մեզ երես առ երես կանգնեցնում են իրերի հանդեպ. մինչդեռ մտածողությունը զուրկ է այդպիսի ընդունակությունից. նա գործատոնում է այնպիսի հասկացողություններով, որոնք զուրկ են «իրայնությունից», որոնք չեն շոշափվում, չունեն իրական գոյություն։ Իրոք, ասենք, արժեքը չի շոշափվում, նա առանձին ձևով գոյություն չունի մարդկանց մեջ ստեղծված հարաբերությունների մեջ, սակայն, այնուամենայնիվ, նրանով որոշ իրականության (կապիտալիստական) էությունը շատ ավելի խոր է արտահայտվում, քան շոշափելի տպավորություններով արտահայտված ճշմարտությունը։ Արժեքը, նկատել է Լենինը, մի կատեգորիա է, որը զուրկ է զգայական իրայնությունից, սակայն նա ավելի ճշմարիտ է, քան պահանջի և առաջարկի օրենքը։

Հեգելը խոսելով գիտնականի իսկական կոչումի մասին, նուրբ նկատում է, որ բնության էմպիրիկական թվերի իմացումը մեծ ծառայություն է, սակայն անհամեմատ ավելի մեծ ծառայություն կլիներ, եթե ստիպեինք անհետանալ քանակների էմպիրիկ սահմանումը այնպես բարձրացնելով նրանց մինչև քանակական սահմանումների ընդհանուր ձևը, որ նրանք դառնային օրենքի կամ չափի մոմենտներ։

Հեգելի միտքն այն է, որ ինքնին փաստը կամ փաստերը, նկարագրությունները շատ բան չեն տալիս, նրանք պետք է իմաստավորվեն, բացվեն մարդու աչքերի առաջ իրենց ներքին կապերի մեջ, լուսավորվեն ամբողջության էությամբ, դիտվեն որպես այս վերջինի օրգանական մասերը. իրատեսությունն ու խորատեսությունը իրար չեն ծածկում, ավելին՝ վերջինի համար առաջինը կարող է, մի որոշ իմաստով. այնքան էլ նպաստող դեր չխաղալ, որովհետև առարկայական տպավորությունների շատությունն ու բազմազանությունը կարող են միտքը հոգնեցնել, նրա թափանցող ուժը ջլատել։ Թռիչքի համար պետք է ետ-ետ գնալ, խորանալու համար պետք է վերանալ իրերի աշխարհի մթագնող, պատահական կողմերից՝ մաքի ամբողջ ուժը մղելով դեպի էության ճանաչումը։ Սակայն, իհարկե, այստեղ էլ չափ է պահանջվում։

Հայտնի է, որ մետաֆիզիկներն ընդհանուր հասկացողություններով շարարկում են. սխոլաստիկների մոտ այնպիսի հասկացողություններ, ինչպիսին են՝ գոյություն, սուբստանցիա, էություն, բնություն, ատրիբուտ, հատկություն, մոդուս, պատճառ, գործողություն, ազատություն, հավերժություն և այլն, կտրված են ամեն մի կոնկրետից, դուրս են ժամանակից և տարածությունից լինելով քարացած ընդհանուր ձևեր, որոնց մեջ խցկվում է կենդանի իրականությունը։ Կոնդիլյակը նկատի ունենալով սխոլաստիկներին իրենց այդ վերացական կատեգորիաներով՝ այդ անվանում է խորհրդածություն դատարկության մեջ։ Սխոլաստիկները չեն գիտակցում այդ դատարկությունը՝ նմանվելով այնպիսի մարդկանց, որոնք չունեն փող և չգիտեն շրջանառության մեջ եղած դրամները. սրանք կարծում են, թե բառային ընորոշումները դառնում են իրերի բնորոշումներ և սկսում են

[1] Վ. Ի. Լենին, Փիլ. տետրակներ, էջ 173.

հիանալ, ինչպես այդ նրանց թվում է, իրենց հայտնագործությունների խորությամբ։ Սակայն նրանք նման են՝ «ինչպես նման դեպքում նկատում է Լոկկը այն մարդկանց, որոնք չունենալով փող և չիմանալով շրջանառության մեջ եղած դրամները, մեծ գումարների հաշվարկ կատարելիս հաշվենիշ մարկաներով, որոնք նրանց կողմից անվանվելիս լուիդորներ, լիվրներ, էկյու։ Ինչպիսի հաշվարկ էլ նրանք կատարեին, նրանց գումարները միշտ կմնային հաշվենիշ մարկաները»։[1]

Նկատողությունը սրամիտ է և դուրկ չէ հիմքից։

Էմպիրիկների առարկությունը հասկացողությունների դեմ շոշափում է սխոլաստիկների այն մաներան, երբ հասկացողությունները դուրս են բերվում ապրիորի եղանակով՝ չարտահայտելով իրերի հմարիտ հատկությունները. և այդ պատճառով էլ լինելով ժամանցային մակերեսային։ Հասկացողությունների կատեգորիաները, նկատում է Ֆրենսիս Բեկոնը անփոփոխ ձևով մի մտածողից անցել են մյուսին, մինչդեռ բնության խորքը և հեռուները թափանցելու համար անհրաժեշտ է իրերից ավելի ստույգ և զգույշ ճանապարհով դուրս բերել ինչպես հասկացողությունները, այնպես էլ աքսիոմաները. և ընդհանրապես անհրաժեշտ է բանականության ավելի լավ և հուսալի աշխատանքը։ Բեկոնը շատ ավելի կտրուկ է արտահայտվում հասկացողությունների օգտին. նա գանում է, որ հասկացողությունները գիտելիքների ֆունդամենտն են, դրա համար էլ նրան պետք է վերաբերվեն լրջորեն, շրջահայացորեն, որովհետև, եթե հասկացողությունները դուրս են բերվում առարկաներից պատահականորեն, ապա այս դեպքում այն, ինչ որ պետք է կառուցվի այդ ֆունդամենտի վրա, չի կարող լինել ամուր։ Բեկոնը նույնպես «հում փաստերից» երկրպագու չէ, փորձն ինքնին, իր տարերային ձևի մեջ վերցրած, քիչ բան է տալիս և դրա համար էլ մեր հույսը այդ երկու ընդունակությունների սերտ միության մեջն է, փորձնական և մտային միությունը, որը մինչև այսօր դեռ չի ավարտվել։

Այս բանի հիման վրա կարելի է տեսնել, որ էմպիրիկ մատերիալիստներից լավագույնները կռահել են հասկացողությունների կարևոր նշանակությունը իմացության պրոցեսում, սակայն, այնուամենայնիվ, նրանք ի վիճակի չեղան գիտական բարձրությամբ գնահատել թեորետիկական մտքի. որպես ավելի բարձր աստիճանի, խորագույն նշանակություն աշխարհի ճանաչողության մեջ։ Նրանք չըմբռնեցին այն. որ հասկացողությունները յուրահատուկ ձևով են արտացոլում իրերն ու երևույթները. արտացոլման այդ սպեցիֆիկումն այն է, որ հասկացողություններն անմիջական չեն, այլ միջնորդավորված։ Հասկացողությունները նույնպես օբեկտիվ աշխարհի սուբեկտիվ օրրակներն են, բայց սուբեկտիվ ըստ ձևի. օբեկտիվ ըստ բովանդակության։ Հասկացողությունները թեև դուրկ են իրային զգայականությունից, բայց արտացոլում են իրականությունը, նրա էական հարաբերությունները. արժեքն անշուշտ բույր չի արձակում, նա, իհարկե, զգայությունների համար անորսալի է, այն առանձին ապրանքների մեջ զգայություններով չեք բաց անի։ Չնայած դրան. Մարքսը հիմնովին ցույց տվեց, որ արժեքն ավելի խորն է արտացոլում ապրանքային անտեսության զարգացումը, քան առաջարկի և պահանջարկի օրենքը։ Հասկացո-

[1] Կանդիլյակ. Զրույցներ սիստեմների մասին, էջ 13

ղությունները կազմավորվում են ընդարձակ փաստերի ընդհանրացումների ռեալ հողի վրա։ Աբստրակտ մտածողության համար բնորոշն ընդհանրացումն է, մի բան, որը տալիս է կապերի և հարակցությունների լայն իմացում։ Դարեր դարերի հետևից են անցել, սոցիալական կյանքում առաջացել և անհետացել են միլիոնավոր փաստեր, դեպքեր, մարդիկ, հասարակական խմբեր անխնա պայքար են մղել իրար դեմ, բայց միայն 19-րդ դարում այդ վիթխարի մատերիալը պատշաճ ձևով ընդհանրացվեց և դուրս բերվեց դասակարգային պայքարի սրեմբր։ Այս հասկացողության մեջ բացվում է դասակարգերի բաժանված հասարակությունների խորագույն էությունը։ Կարող է մեկը—լինի նա գիտնական թե գործիչ—հասկանալ ժամանակակից հասարակությունների էական հարաբերությունները, էությունը, անտեսելով դասակարգային պայքարը, չգործառնելով այդ հասկացողությամբ։ Առանց ընդհանրացումների դլուխ չի կարելի հանել երևույթների անհատականությունների բազմազանությունից։ Ինչպիսի՞ դժվարության կհանդիպեինք մենք մեր առօրյա գործունեության, հարաբերությունների մեջ, եթե չմշակվեին «մարդ», «մարդկություն» հասկացողությունները։ Ի դեպ սոփեստությունն աշխատում է այսպիսի հնարտությունները էլ արատավորել։ Ռեակցիոն գլուխները իրենց հակամարդկային տեսակետները անցկացնելու համար, իրենց ավերիչ հերոստրատյան պրակտիկան վարագուրելու համար աշխատում են սասանել, խափանել ընդհանուր հասկացողությունները։ Խոսում են այն մասին, որ «մարդ» հասկացողությունը ոչ մի բովանդակություն չունի՝ լինելով զտագույն ոչնչություն, սնամեջ բան։ Ռեալիստի, իրաճաշակի դեմք ընդունելով՝ մոլի գլուխները միաբերան գոռում էին, թե իրենք աշխարհում դեռևս այդպիսի իրի չեն հանդիպել և չեն շոշափել, որ դա զուտ հորինվածություն է՝ ֆանտազիայի ստեղծագործություն։ Եթե «մարդ» հասկացողությունը ոչինչ չի արտահայտում, նշանակում է ոչինչ չի արտահայտում նաև «մարդկություն» հասկացողությունը, հետևաբար ինչպիսի ստոր քայլեր էլ կատարեն պետությունները, քաղաքական խմբերը, այն չի կարելի որակել որպես հակամարդկային, քանի որ այդպիսի ընդհանուր «իր» գոյություն չունի։ «Մարդկություն»—անարժան մի բան, որ պարապ գլուխներն են հղացել։ Իրականության մեջ կա գերմանացի, ֆրանսիացի, ֆրիցներ, չգիտեմ ուրիշ էլ ինչ բան, բայց չկա «մարդ», սրանից հետևում է այն, որ ֆաշիստ վանդալները «չեղած» մարդկության դեմ չէ որ կռվում են և ձգտում են՞ ոչնչացնել, այլ նրանք պարզապես կամենում են ոչնչացնել ռուսներին, հայերին և այլն... Եթե չկա «մարդ» ընդհանրապես, ապա այդ դեպքում գաղանային ամեն մի գործողություն չի կարելի որակել որպես հակամարդկային... «Ինչպիսի «փաստարկ» ֆաշիստ ջարդարարների օգտին։ Իսկ այն հասկացողությունները, որոնք երկար և ձիգ դարերի գայլգացման բարձրագույն արդյունքներն են, իմպերիալիզմի մոլի ներկայացուցիչների կողմից մերժվում են որպես ոչինչ չասող բաներ։ Դատարկ և սին բաներ են քաղաքակրթություն, լուսավորություն, հումանիզմ, դեմոկրատիա, պրոգրես, ազատություն, խիղճ, ազնվություն և հարուստ հասկացողությունները։ Նկատեցեք ժամանակակից ռեակցիոն մտածողներն ու գործիչները խիստ «ռեալիստ» են, իրապաշտ, նոմինալիստներ։ հավատում են միայն զգացումների վկայություններին, աշխարհի խորագույն գաղտնիքներին «հասու» են։ լինում զգացողությունների էկզալտացիայի միջո-

ցով. կորչեն վերացական մտածողությունը ե գիտական բոլոր ընդհանրացումները... Այսպիսի «տեսակետի» դեմ վիճելը սրբապղծություն է. Գաումության դատավճիռը արդեն շատ պերճախոս է. Մարքսը երեելի է նկատել, որ հասարակական երևույթների վերլուծությունը չի կարող գլուխ գալ միկրոսկոպի կամ էլ քիմիական ռեակտիվների օգնությամբ. այս բնագավառում հետազոտողին օգնության է գալիս աբստրակցիայի ուժը, կյանքը հարատև շարժման և զարգացման մեջ է. մի բան, որը Թույլ չի տալիս, որ հասկացողությունները ընդարմանան, սառեն. Այդ բանի ուժով հասկացողությունների քանակը մեկ ընդմիշտ չի տրվում. նորանոր հասկացողություններ են ստեղծվում, իսկ հներն էլ զգալի չափով կերպարանափոխվում են՝ ավելի հարստանալով, ձեռք են բերում ստուգապատում արժեք. Հասկացողությունները չեն կարող անտարբեր մնալ դեպի կյանքի արմատական փոփոխությունները. եթե կյանքում հիմնովին փոխվում են որոշ հարաբերությունները, որոշ կապերը, ապա նրանց հասկացողությունները չեն կարող նույնը մնալ. Այստեղ օրինակների առատությունը անչափ է, այնքան շատ, որ դժվար է ընտրություն կատարել և սահմանափակվել մի քանիսով. Բերև տիպիկ օրինակ նշենք մեր երկրում կատարվածը. մի բան, որ տեղի ունեցավ մեր աչքերի առաջ. Ընկեր Ստալինը Սովետների Համամիութենական 8-րդ արտակարգ համագումարում տալով դասակարգերի շարժման և զարգացման անալիզը, ցույց տալով այն վիթխարի տեղաշարժերը, որոնք կատարվել են Սովետական երկրում, խոր ընդհանրացումներով լիովին ցույց տվեց, որ մի քանի կարևոր հասկացողությունների բովանդակությունը հականորեն փոխվել է. «պրոլետարիատ» և «գյուղացիություն» հասկացողությունները այլևս չեն արտահայտում այն բովանդակությունը, որը կապվում է մեր երկրի այդ երկու հիմնական դասակարգերի անվան հետ. Սովետական երկրի բանվոր դասակարգը դադարել է պրոլետարիատ լինելուց. ճիշտ նույնպես սովետական գյուղացիությունը դադարել է հին հասկացողությամբ գյուղացիություն լինելուց. մենք այժմ ունենք կոլխոզային գյուղացիություն, որն արդեն այլ որակ է. Նա, ով չի ըմբռնում այդ, նշանակում է նա զարգացումից գլուխ չի հանում և հասարակական կյանքի առաջշարժման բարդ ալգեբրան վերածում է թվաբանական հասարակ գործողությունների. Այս նոր հասկացողությունների քամահրումը լավ «խրատ» էր ֆաշիստական Գերմանիայի համար. նրանք միայար այն էին ասում, թե աշխարհում ոչինչ չի փոխվել, փոխվել են միայն ցուցանակները. Ընկեր Ստալինի հանճարեղ միտքը ժամանակին թափանցեց փոփոխությունների էության մեջ և նոր հասկացողությունների ձևով ընդհանրացրեց փաստերի մոնբլանը. Այդ նոր հասկացողությունների ստեղծումով ճիշտ եղանակներ մշակվեցին քաղաքական-գործնական խնդիրների լուծման համար, կողմնորոշման շատ ավելի ստույգ և խոր միջոցներ ստեղծվեցին.

Այս օրինակը լավագույն իլյուստրացիա է Լենինի այս մտքերի. թե եթե ամեն բան զարգանում է, ապա սա վերաբերում է արդյոք իրենց ընդհանուր հասկացողություններին և մտածողության կատեգորիաներին. Եթե ոչ, նշանակում է, որ մտածողությունը կապված չէ կեցության հետ. եթե այո, նշանակում է կա հասկացողությունների և իմացության դիալեկտիկա, որն ունի օբյեկտիվ նշանակություն.

Այսպիսով մենք տեսնում ենք, որ մտածողության առանձնահատուկ բովանդակությունն արտահայտվում է հասկացողությունների մեջ, որոնք արտացոլում են կյանքի էական հարաբերությունները՝ տալով ավելի խոր ճշմարտություններ։ Հեգելի տերմինաբանությամբ՝ հասկացողությունների միջոցով որսվում է «շարժման մոտիվի բովանդակությունը»։ Զգացողությունները չեն կարող այդ տալ, չնայած նրանք ավելի մոտ են կանգնած իրերի աշխարհին։ Իմացության դիալեկտիկան հենց այն է, որ զգայությունների այդ «մոտիկությունը» իրերին՝ նրանց հայտնի չափով հեռու է պահում էությունից, էական հարաբերություններից։ Մարքսը իր «Կապիտալ»-ում այդ բանը լավ է ցուցադրել. «Ապրանքների արժեքի առարկայականությունը նրանով է տարբերվում այրի Հուրտիգից, որ հայտնի չէ, թե որտեղ կարելի է գտնել այն։ Ապրանքային մարմինների շոշափելի, կոշտ առարկայականության ուղիղ հակադրությունը կազմելով՝ բնանյութի ոչ մի ատոմ չի մտնում ապրանքային մարմինների արժեքային առարկայականության մեջ։ Այս պատճառով մենք կարող ենք մի առանձին ապրանք շոշափել և շուռումուռ տալ, ինչքան ուզենք, նա իբրև արժեք ներկայացնող իր անշոշափելի է մնում»։

Լենինը լավ է նկատել, որ մտածողությունը կոնկրետից գնալով դեպի աբստրակտը՝ ճշմարտությունից չի հեռանում, այլ մոտենում է նրան, ե դրա համար էլ մատերիայի, բնության օրենքի, արժեքի և ընդհանրապես բոլոր գիտական աբստրակցիաները իրականությունն արտացոլում են ավելի խոր, ավելի հիշտ, ավելի լրիվ։ Աբստրակտ մտածողության հեռացումը իրականությունից հարաբերական. մեթոդական բնույթի է, հեռանալով երևույթի պատահական կողմերից, մթագնող մանրամասնություններից հետազոտողը փնտրում և գտնում է երևույթների տիպիկականը, մի տեսակ մնայունը։

Զգայությունները նույնիսկ տալիս են իրերի և երևույթների միջև եղած կապերը, սակայն, իբրև կանոն, նրանք ավելի շուտ տալիս են արտաքին, պատահական կապերը՝ չթափանցելով երևույթների բուն էության մեջ, այսինքն՝ ի հայտ չբերելով խմանենտ օրինաչափությունները, էական հարաբերությունները։ Սովորական բանվորը մշտապես տեսնում է իրեն շահագործող կապիտալիստին, պետական չինովնիկներին, բանակի առանձին զինվորներին, սակայն այդ «տեսանելիությունը» բավարար չի տեսնելու կապիտալիզմի «հորիզոնը», այսինքն թափանցելու կապիտալիզմին հատուկ հարաբերությունների, շարժման և անկման օրինաչափությունների մեջ. բանն այն է, որ սովորական իրերի «հետևում» բաներ կան, որ զգայությունները չեն կարողանում շոշափել, բացահայտել։ Թշնամուն կարելի է տեսնել, շոշափել, սակայն այնքան հեշտ չէ տեսնել այն հարաբերությունները, որոնց մարմնացմամբ նա դառնում է թշնամի։ Լենինը այս մտքերը լավ է լուսաբանել Տաղլուսվարների Համառուսաստանյան երկրորդ համագումարում։ Լենինը նկատել է, որ Կոլչակին և Դենիկինին տեսնելը դժվար չէ, սակայն այն, թե թշնամին արդեն իր մեջ է և թե այս թշնամին հենց նույնն է, թե ռևոլուցիան մի ինչ-որ անդունդի առաջ է կանգնած, որին

1 Կարլ Մարքս. Կապիտալ, հ. I, էջ 15.

դեմ էին առնում բոլոր նախկին ոնոլուցիաները ու ետ քաշվում,—այսպիսի մի ըմբռնում ժողովուրդը չի կարող ունենալ։

Վուլգար մատերիալիզմի՝ ի դեմս էկոնոմիստների և մենշևիկների՝ արգումենտացիան խարսխված էր այսպիսի անմիջական «տեսանելիության» հողի վրա. բանվորը—ասում էին նրանք—տեսնում, շոշափում է, զգում է դրանից ավելին չի էլ պահանջվում, այն, ինչ դրանից դուրս է, նա սատանայից է։ «Իրայնության» այսպիսի տեսակետը չար կատակ խաղաց նրանց հետ։ Ամեն ինչ շոշափելով իմանալու ժոլությունը հասցրեց բարձր մտածողության, անմիջական թեորիայի ժխտմանը, թեորիայի արժանիքների—մորիլիզացնող. կազմակերպող, փոխարկող դերի նվաստացմանը, ժխտմանը։ Բանի այս կողմը մեծ ուժով վեր է հանել և ցուցադրել ընկեր Ստալինը գծագրելով թեորիայի ակտիվ, ստեղծագործ նշանակությունը։ Լենինը հարցը դրել է այսպես. ինչն է ավելի մոտիկ իրականությանը, պատկերացումը, թե մտածողությունը։ Հարցի պատասխանը կարող է լինել միայն դիալեկտիկական, այսինքն՝ և այո, և ոչ։ Պատկերացումը մտածողության համեմատությամբ ավելի անմիջական է, առարկայական, սակայն նա չի կարող ընդգրկել շարժումն ամբողջությամբ, օրինակ՝ չի ընդգրկում մեկ վայրկյանում 300.000 կիլոմետր արագության շարժումը, իսկ մտածողությունն ընդգրկում է և պետք է ընդգրկի։

Մինչ-մարքսյան մատերիալիզմը իր ամենատաղանդավոր և բանիմաց ներկայացուցիչներով հանդերձ՝ կանգ առավ սենսուալիզմի այն նշանավոր ֆորմուլայի վրա, թե ինտելեկտի մեջ չկա մի այնպիսի բան, որ առաջ պարունակված չլիներ զգացումի մեջ՝ անկարող լինելով հասկանալ մտքի և զգայությունների դիալեկտիկան։ Ֆորմալ, ոչ դիալեկտիկորեն մտածող մարդուն իրերը ցաքուցրիվ վիճակումն են երևում, այդ իրերը, Հեգելի դիպուկ արտահայտությամբ, հանդես են գալիս գիտակցության առաջ, առանց փոխադարձ շփման։ Հեգելը պահանջում է կյանքն առնել լոգիկայի մեջ, մի բան, որը Լենինը բարձր է գնահատում։ Այդ նշանակում է իրերին և երևույթներին մոտենալ շատ կողմերից՝ կանգ չառնելով իմացական պրոցեսների նախնական, ելակետային աստիճանի վրա, այլ զգայություններով սկսված իմացությունը շարունակել, հասցնելով հասկացողությունների աստիճանին։ Հեգելը երկու կարգի ճշմարտություն է նշում. մեկը նա անվանում է ճշմարտություն առաջին հայացքից, իսկ մյուսը՝ ճշմարտություն խորագույն իմաստով. «Նախնականում ճշմարտության ներքո հասկացվում է այն, որ ես գիտեմ ինչպես մի բան գոյություն ունի։ Դա, սակայն, ճշմարտություն է լոկ գիտակցության հարաբերությամբ կամ էլ ֆորմալ ճշմարտություն». «Իսկ ճշմարտություն խորագույն իմաստով այն է, որ օբեկտիվությունը նույնանում է հասկացողության հետ»։

Այս ֆորմուլայի մեջ արգասավորն այն է, որ Հեգելը պահանջում է չսահմանափակվել իրերի մակերեսային տպավորություններով, չարձանագրել լոկ նրանց դոյության փաստերը, այլ առաջ շարժվելով տալ նրանց արժեքավոր ճանաչողությունը, մի բան, որին կարելի է հասնել միայն հասկացողությունների միջոցով։ Սակայն, ինչպես արդեն նշվել է, հասկացողությունները մի կետի վրա չեն կանգնում, այլ շարժվում ու զարգանում են՝ ավելի կոնկրետանալով. այլ կերպ էլ չէր լինի, քանի որ նրանց մեջ արտացոլվում է փոփոխվող ու առաջադիմող իրականությունը։ Հասկացողու-

թյունների շարժումը կարել է անջատել իրականության շարժումից՝ նշանակում է ընկնել անլուսաթափանց սխոլաստիկայի մեջ։ Հենց այդպես է վարվում իդեալիստը։ Նա հասկացողությունների դինամիկան, շարժումը վերագրում է բանականության անբացատրելի ուժին։ Իդեալիստի տեսակետից հասկացողությունների շարժումը միանգամայն ինքնուրույն բան է,— անկախ լինելով օբեկտիվ աշխարհից։

Մարքսիզմ-լենինիզմը բոլորովին նոր լույսով մոտեցավ հասկացողությունների շարժմանը։ Ամենից առաջ ցույց տրվեց, որ իրական աշխարհի կապերն ու հարաբերությունները արտացոլվում են ոչ թե մի անդամից, բացարձակ ավարտվածությամբ, այլ հետզհետե՝ ընթանալով խորացման և կոնկրետացման գծով։ Այդ այդպես է, քանի որ հասկացողությունների շարժումը կապված է իրականության շարժման հետ։ Ռիտնականը, հետևողական մտածողը հասկացողությունները դուրս է բերում կյանքի իրական հարաբերություններից և նրանց հիմքի վրա էլ կոնկրետացնում է այն առաջ մղելով գիտությունը։ Լենինը այս բանի լավ օրինակ է ցույց տալիս։ Գեղության հարցը,—նկատում է Լենինը,—«Գոմունիստական մանիֆեստի» մեջ դրվում էր դեռևս ծայրահեղ վերացականորեն», ամենաընդհանուր հասկացողություններով, 1848—1851 թ. թ. ավտոտուների հիման վրա։ Իսկ «Լուի Ֆոնապարտի բրյումերի 18-ումն» Մարքսը այդ հարցը դնում է «կոնկրետ կերպով և չափազանց ճշգրիտ». բոլոր նախկին ռևոլուցիաները կատարելագործել են պետական մեքենան, մինչդեռ պետք է ջարդել, փշրել այն։ Այստեղից որոշակի հետևում է, որ թեորիական ընդհանրացումների հիմքում ընկած է պրակտիկան, որ հասկացողությունների կոնկրետությունն ու հարստությունը սերտորեն կապված են գարգացող իրականության համապատասխան գրությունների հետ, որ հասկացողությունների գոյացման պրոցեսը սերտորեն կապված է հասարակության նյութական արտադրական պրոցեսի հետ։ Կարող էին լինել «տրակտորը», «կոմբայնը» և այլ հասկացողություններ, առանց այդ երևույթների իրական գոյությանը։ Առաջանում են, ձևակերպվում նորանոր հասկացողություններ, փոխվում և նոր բովանդակությամբ լցվում հները։

Մետաֆիզիկը հասկացողությունների դիալեկտիկան չի տեսնում, նրա համար հասկացողությունը շարունակում է մնալ միշտ նույնը, մինչև անդամ այն ժամանակ, երբ նրա հին բովանդակությունը լիովին հոդմահարվել է։ Այդ տեսակետից, այսպես օրինակ՝ «ցենտրալիզմը» միշտ և բոլոր դեպքերում, բոլոր պայմաններում ունի դեսպոտական բովանդակություն։ Այսպես են դատել II Ինտերնացիոնալի, դրանց թվում մենշևիկների, ղեկավարող լիդերները։ Նրանք չէին կարող ըմբռնել, որ պրոլետարական ցենտրալիզմը սկզբունքորեն այլ բան է՝ արտացոլելով նոր հարաբերությունները, երևույթի էական նոր կողմերը։

Լենինը երևելիորեն է ցույց տվել հարցի դիալեկտիկան.—«Նարավոր է նոր բովանդակության ցենտրալիզմ, որը գլուխ է գալիս առանց բռնության, առանց բռնադատության, կամավոր ցենտրալիզմ, որը հագեցված է նոր բովանդակությամբ։ Ինդիրն այն է, որ պետք է հասկանալ, թե որ դասակարգն է այդ դրոշակով հանդես գալիս։ Հենց այս օրինակը ցույց է տալիս հասկացողությունների դարմանալի ճկունությունը անցման և հմանների բաղմաղան ժամենտները։ Խոսելով II Ինտերնացիոնալի լիդեր-

ների, գործիչների հայացքների ոսկրացածության մասին՝ ի դեմս Բերնշտայնի՝ Լենինը նկատում է, որ նրան ցենտրալիզմը պատկերանում է իբրև այնպիսի մի բան, որ կաթելի է միմիայն վերևից, միմիայն չինովնիկության ու զինվորականության միջոցով փաթաթել ժողովրդի վզին ու այն պահպանել։ Մարքսիզմի կլասիկները հասկացողությունների մշակման և ձևակերպումների մեջ լիովին հարազատ էին մնում իրականությանը, ունկնդրելով նրա ձայնին, խորաղնին անալիզի ենթարկելով այն բոլոր տեղաշարժերը, որոնք աղբյուր են հանդիսանում նոր հասկացողությունների։

Լենինը գրում է, որ Մարքսն ու Էնգելսը «կոմունիստական մանիֆեստում» կատարելով պատմության ընդհանուր ամփոփումներ՝ պետության մեջ դասակարգային տիրապետության օրգան տեսան. նրանք հանգան այն եզրակացությանը, որ պրոլետարիատը չի կարող տապալել բուրժուազիային, առանց նախապես քաղաքական իշխանությունը նվաճելու, առանց քաղաքական տիրապետություն ձեռք բերելու, առանց պետությունն «իբրև տիրող դասակարգ կազմակերպված պրոլետարիատի» փոխարկելու։ Սակայն, նկատում է Լենինը—այստեղ հարցը չի դրված այն մասին, թե պատմական զարգացման տեսակետից ինչպես պետք է բուրժուական պետությունը պրոլետարականի փոխարկվի։ Հավատարիմ դիալեկտիկական մատերիալիզմի իր փիլիսոփայությանը • Մարքսը իբրև հիմք վերցնում է 1848—1851 թ.թ. ռևոլուցիայի մեծ տարիների պատմական փորձը։ Մարքսի ուսմունքն այստեղ ևս, ինչպես և միշտ, փիլիսոփայական խոր աշխարհայացքով ու պատմության ճոխ գիտությամբ լուսաբանված փորձի հանրագումարումն է հանդիսանում։

Նոր, գիտական հասկացողություններն ընդարձակում են ճանաչողության սահմանները, բաց են անում նոր հորիզոններ։ Բուրժուական սոցիոլոգիայի բարձրագույն արտահայտությունը դարձավ դասակարգային կռվի հասկացողությունը։ Այդ հասկացողության ձևակերպմամբ ռեստավրացիայի ժամանակաշրջանի պատմագետները մի գլխով բարձր կանգնեցին իրենց նախորդներից և ժամանակակից այն մտածողներից, որոնք շարունակում էին գործառնել ավելի աղքատիկ բովանդակության հասկացողություններով. այդ հասկացողությանը հանգեցին «բուրժուազիայի առաջավոր ու ամենից խորաթափանց մտածողները» (Լենին)։

Սակայն այդ հասկացողությունը, իրերի զարգացմամբ և բերումով, Մարքսի մոտ լցվում է նոր, հարուստ, կոնկրետ բովանդակությամբ։ Այս ուղղությամբ Մարքսի մեծագույն ծառայությունն այն է, որ նա ապացուցեց, 1) որ դասակարգերի գոյությունը կապակցված է լոկ պատմական որոշ մարտերի հետ, որոնք հատուկ են արտադրության զարգացմանը, 2) որ դասակարգային կռիվն անհրաժեշտորեն տանում է դեպի պրոլետարիատի դիկտատուրան, 3) որ այդ դիկտատուրան ինքը սոսկ մի անցումն է դեպի ամեն տեսակ դասակարգերի ոչնչացումն ու դեպի առանց դասակարգերի հասարակությունը։ Մարքսը—Լենինի արտահայտությամբ—դասակարգերի կռվի ճանաչումն ընդարձակում է մինչև պրոլետարիատի դիկտատուրայի հանձնումը։ Հասկացողությունների վիթխարի ընդարձակումը իր հետ բերում է մեծագույն խորություն և կոնկրետություն։ Ֆորմալ լոգիստները (1) Ինտերնացիոնալի լիդերներն ըստ էության այդ կաբեգո-

բիային էին պատկանում) հասկացողությունների ընդարձակման մեջ ոչ մի հարստություն, նորություն չին տեսնում։

Ոպորտունիստը հասկացողությունների բուրժուական շրջանակներից դուրս չի գալիս. Նա—Լենինի դիպուկ բնորոշմամբ—դասակարգային ճանաչման բնագավառը սահմանափակում է բուրժուական հարաբերությունների բնագավառով։ Նա հասկացողությունների շարժում չի տեսնում, վերջակետ է գնում նրանց առաջ. դասակարգային կռվի հասկացողությունը չի հասնում ամենագլխավոր կետին, կապիտալիզմից կոմունիզմին անցնելու շրջանին, բուրժուազիայի տապալման ու նրա լիակատար ոչնչացման շրջանին։ Լենինը երևելի ձևով ցույց է տալիս ֆորմալ մտածողության սահմանափակությունը։ Լենինը Հեգելի մեծությունն ու երախտիքը տեսնում է այն բանում, որ նա «... հասկացողությունների հերթափոխության, բոլոր հասկացողությունների փոխադարձ կախման, նրանց հակադրությունների նույնության, հասկացողությունների մեկը մյուսին անցումների, հավերժ հերթափոխությունների, հասկացողությունների շարժման մեջ դրաեես հենց իրերի, բնության այդպիսի հարաբերությունները»[1]

Հեգելը միայն կռահեց այդ բանը, սակայն իդեալիզմի ուժով մտքի, քաղաքականության ամեն մի կոնկրետ գեպքում Հեգելը ի վիճակի չէր կանգնել արտացոլման տեսակետի վրա։ Լենինը դուրս բերելով Հեգելի ուսմունքից արժեքավոր մոմենտները՝ իմաստավորեց նրանց՝ մտցնելով թեորիական մտքի նոր «կապակցություններին» մեջ՝ մերելով նրանց հետ։ Լենինը պատմական, փաստական հարուստ մատերիալով հիմնավորեց, ցույց տվեց, որ մարդկային հասկացողություններն անշարժ չեն, այլ հավերժորեն շարժվում են՝ անցնելով մեկը մյուսին, վերածվելով մեկը մյուսի մեջ, առանց դրան նրանք չէին արտացոլի կենդանի կյանքը։

Այս մտքերի լավ իլյուստրացիա է ռեոլուցիաների պատմությունը. «ռեոլուցիա», հասկացողության մեջ կարող են տեղավորվել վիթխարիորեն մեծ տեղաշարժերը և մինիատյուրային դեպքերն ու անցքերը, սակայն այս ճանապարհի վրա սահմանային արդելող բացարձակ սյուներ չկան՝ մեկը անցնում է մյուսին։ Բուրժուական ռեոլուցիան որոշ կոնկրետ պայմանների գեպքում անցնում է սոցիալիստական ռեոլուցիայի։ Մտքի, հասկացողությունների ճկունության, շարժունության կլասիկ օրինակ է բուրժուա-դեմոկրատական ռեոլուցիան սոցիալիստականի վերաճելու լենինյան հռչակավոր և ամենաարդասավոր թեորիան։ Բոլոր կալիբրի մետաֆիզիկները պնդել են և շարունակում են պնդել, որ ռեոլուցիայի բուրժուական սահմանները երբեք չեն կարող շարժվել և անցնել մի այլ բանի, դա կլինի հասկացողությունների բռնաղատում։ Բուրժուա-դեմոկրատական ռեոլուցիայի և սոցիալիստական ռեոլուցիայի միջև մի ամբողջ չինական պարիսպ են քաշում։ Նրանք մարդկային իրական հարաբերություններին մոտենում են որպես ստանդարտ բաների՝ չտեսնելով դասակարգային կոնկրետ ձևերն ու պայմանները՝ «անիմաստ կրկնելով «սերտած» ֆորմուլան, փոխանակ ուսումնասիրելու նոր, կենդանի իրականության յուրահատկությունը» (Լենին)։ Նրանք քաղաքականության մեջ մանրախույզներ են, տնայնագործներ, որոնք իրենց հանձնում են դեպքերի հոսանքին՝ մնալով որոշ առա-

[1] Լենինյան ժող. IX, էջ [illegible]

րյային։ Լենինը գտնում էր, որ քաղաքականությունն իսկական իմաստով սկսվում է այնտեղ, ուր շարժվում են միլիոնները, և դրա համար էլ քաղաքականության ամեն մի գիտական հիմնավորում պետք է բխի «... դասակարգերի հարաբերակցությունների և պատմական ամեն մի մոմենտի կոնկրետ առանձնահատկությունների ամենաճշգրիտ և օբյեկտիվորեն ստուգելի հաշվառումից»։[1]

Հասկացողությունները մնում են անշարժ, դառնում են անկենդան, երբ նրանք դուրս չեն գալիս—Լենինի արտահայտությամբ—ֆորմուլաների թագավորությունից։ Կյանքի ուժը հենց այն է, որ ազդակներ է տալիս հասկացողություններին՝ հրում է նրանց դեպի առաջ, ստիպում է, որ նրանք դուրս գան ֆորմուլաների թագավորությունից, մտնեն իրականության թագավորությունը՝ ստանալով միս ու արյուն. հենց այդ բանի ուժով էլ հասկացողությունները կոնկրետանում են և ձևափոխվում։

Այսպես, հասկացողություններին «միս ու արյուն» տվողը իրականությունն է. նրանց «կոնկրետացնողը և ձևափոխողը» նույնպես իրականությունն է։ Եթե կյանքը հուժկու տեղաշարժերի մեջ է, երբ նա ապրում է ցնցումային վիճակներ, ապա այս բանը պետք է իր արտահայտությունը գտնի թեորիական մտածողության, հասկացողությունների մեջ, որոնք նույնպես պետք է լինեն ճկուն, շարժուն և միևնույն ժամանակ ամրակուռ, որպեսզի կարողանան արտացոլել բարդ իրականությունը։ Մարքս-Լենինյան արտացոլման հողի վրա միայն կարող էր բարձրանալ սոցիալիստական ռևոլյուցիայի բարեկաղմ թեորիա։ Լենինը բարձր էր գնահատում հասկացողությունների շարժման հեգելյան վերլուծությունը։ «Հասկացողություններ, որոնք սովորաբար մեռած են թվում, Հեգելը վերլուծում է և ցույց է տալիս, որ նրանցում շարժում կա։ Վերջականը—նշանակում է դեպի վերջը շարժվողը։ Ինչ որ բանը—նշանակում է այն չե, ինչ ուրիշը։ Կեցությունն ընդհանրապես—նշանակում է մի այնպիսի անորոշություն, որ կեցությունը=է չկեցությանը։ Հասկացողությունների ամենակողմանի, ունիվերսալ ճկունություն, մի ճկունություն, որը հասնում է հակադրությունների նույնությանը—ահա թե որն է բանը»[2]։

Մետաֆիզիկ իդեալիստը հասկացողություններին վերաբերվում է ինչպես գույնզգույն խաղալիքների՝ տեղավորելով նրանց համապատասխան արկղների մեջ։ Լայբնիցը հասկացողությունները կլասիֆիկացիայի է ենթարկում ըստ պարզության, որոշակիության և անհակասականության նշանների։ Հասկացողությունների օբյեկտիվ բովանդակությունը լիովին անտեսվում է և նկատի են առնվում միայն արտաքին կապերն ու առնչությունները։ Փիլիսոփայության պատմության մեջ հասկացողությունների ճկունությունը գործադրվել է երկու եղանակով—օբյեկտիվորեն և սուբյեկտիվորեն։ առաջին եղանակը մատերիական պրոցեսի բաղմակողմանիությունը և միասնությունը արտացոլող ճկունությունն է, իսկ մյուսը այդ պրոցեսների արտացոլման աղճատումն է, այսինքն սոփեստությունն է, էկլեկտիկան։

[1] Լենին, Երկերի ժող., հ. XX, էջ 100։
[2] Վ. Ի. Լենին, Փիլ. տետրակներ, էջ 110։

Իդեալիզմն ընդհանրապես իմացաբանական և այլ պրոբլեմների քննության մեջ առանց սուբյեկտության չի կարողանում յոլա գնալ։ Իսկապես, այն փիլիսոփայությունը, որը միտքը կտրում է ուղեղից, ժարդուն՝ բնությունից, Ինչպես կարող է գլուխ հանել իմացաբանական հարցերից, երբ նրա արժանն է ջլատված ու քայքայված. այն փիլիսոփայությունը, որը երեույթն անջատում, կարում է էությունից, երբ այս վերջինը հայտարարվում է միանգամայն անճանաչելի բան, մի՞թե նա կարող է առանց պատեպատ ընկնելու հարցերին պատասխան տալ։ Ի՞նչ իմացական արժեք կունենա այն փիլիսոփայությունը, որ պնդում է, թե գիտակցության շարժումը՝ «ինչպես ամեն մի բնական և հոգեկան կյանքի» զարգացում խարբսխվում է «զուտ էությունների բնության» վրա՝ կազմելով լոգիկայի բովանդակությունը։ Ահա թե ինչու մենք լիակատար հիմք ունենք պնդելու, որ ամբողջ ճշմարտությունն ասել է Լենինը. «Լոգիկան է իմացության թեորիան պետք է դուրս բերվի բնության և ոգու ողջ կյանքի զարգացումից»։[1]

1 Վ. Ի. Լենին, Փիլ. տետրակներ, էջ 90.